

ԿՐՕՆՔ ՀՆԴԿԱՑ

Այս արշաւանքներէն ետքը Վիշնու մարդակերպ կը պըտըտի երկրիս վրայ Սհաւասիկ իւր Հինգերորդ մարմնաւորութեան (կամ ավադարին, ինչպէս կ'ըսեն Հնդկաստանցիք) պատճառն . ք Ռալի կամ Մահարալի հակայն երեք աշխարհներու իշխանութեան տէր ըլլալով, և իւր բռնաւորութեամբ և յափրտակութեամբ աստուածոց բարկութեան նիւթ եղած էր: — Հասարակաց վրէժխնդրութիւնն վրան առաւ Վիշնու: Փորրիկ գաճաճ պրահմանի մը մարմին մտնելով, Վամանա կոչուած թգուկին կերպարանով, խորխտ թագաւորին դիմացն ելաւ, և խնդրեց որ իրեն երեք քայլ տեղ չորհնէ: Պալի սիրով ընդունեցաւ խնդիրն և խոստացաւ տալ իրեն. այն ատեն Վամանա սոսկակի մեծնալով չափեց մէկ քայլով գերկիր, միւսով գերկինք և երրորդ քայլով զծոխքն պիտի չափէր, երբ հակայն ծունր գնելով խոնարհաբար ճանչցաւ գերազոյն աստուծոյն իշխանութիւնը, Վիշնու մթին թագաւորութեան իշխանութիւնը անոր ձգեց՝ »:

Վիշնու ետքը եկաւ երկրիս վրայ թագաւորեց յանձն Ռամայի, որպէս զի մարդիկ կրթէ և իրենց երկրագործութիւն սորվեցնէ: Երկու անգամ երեցաւ նոյն կերպարանքով, իւր երկրորդ թագաւորութեան ատեն՝ Հիւանալի գեղեցիկ կնոջ մը Սիտայի հետ ամուսնացած էր: Ռաւանա հակայն յափշտակեց զնա: Ռամա՝ յափշտակիչը պատուհասելու համար՝ ետէն ինկաւ: Այս կռուոյն մէջ կապկպաց ազգն օգնական առաւ, որոց Հանուման կը հրամայէր, և անիւզ պատերազմիկ արջուց բանակ մը: Ճամբորդելու ատեն ծովախորշ մը Ռամայի գինուորներուն արգելք եղաւ. քայց հանձնարեղ և կտրիճն Հանուման իւր կապիկներով երազութեամբ ծայռից կամուրջ մը շինեց, և անկէց անցաւ բանակն:

Ռաւանա երկար չդիմացաւ իւր թշնամեաց: Արիւնահեղ պատերազմի մը մէջ ինկաւ մեռաւ: Եւ Ռամա յաղթող՝ գտաւ իւր սիրելին Սիտա, որուն համար սկսեւ էր այս հեռաւոր արշաւանքն:

Քրիշնա անունով Վիշնու եղաւ բարեբար զիւցազ մը, որ երկրիս վրայ կը չրջէր, ազգերն չար իշխանաց բռնաւորութենէն կ'ազատէր և զողոջ աւաղակութենէն: Կու տար միանգամայն ազգերուն պատուէրներ և օրինակ առաւ քինութեան:

Իւր վերջին երեւումն երկրիս վրայ կը ցուցնէ Պուտտայի անունով, վերանորոգող բարուց, ճարտար օրէնսդիր և կրօնական արարողութեանց հաստող զոր կը կատարեն պրահմանք: Այս վերջին ավադարն (յայտնութիւն) պրահմանաց ճիգն և ջանքն կը ցուցնէ, որով իրենց բուն կրօնքին կ'ուզեն բերել զպուտտականութիւն: Այս մեծ վերանորոգութիւնը իրաւցնէ ըրաւ մեր դարէն Հինգ դար առաջ Սագիա—Մունի խատակրան մարդն, որ կ'ըսէր թէ կրնանք ամենակարողին հասնիլ կատարեալ իմաստութեամբ, և Պուտտա անունն առաւ, որ զգերազնեցօրէն իմաստուն ըսել է:

Հնդիք Վիշնուի դարձին կը սպասեն, որ ի կատարած ժամանակաց քընէն պիտի ելլէ, ուր կայ Հիմայ, և այս մարդկութեան կենաց երևոյթ պատկերին վերջ պիտի տայ: Այն ատեն թեաւոր, բողբոլիկ սպիտակ ձիւ մը կերպարանօք պիտի յայտնուի, և ոտքով թռպելով գերկրազուստն մոխիր պիտի դարձնէ, և շատերը յանդունդս զծոխոց պիտի ձգէ:

Սիւա, թէ և եղբայր Վիշնուի, սակայն իւր թշնամիներէն ամենէն աւելի

1. Կիշնիօ (Guigniaut) Պարսկական հին Կիշնիօ:

անհայտն է: Վիշնուի արչաւանքները պատմելով գրեթէ Սիւայի ամբողջ պատմութիւնը ըրած ենք. որովհետեւ Վիշնու երկրի եւ մարդոց համար կռուելու ատեն՝ Սիւայի հետ կը պատերազմէր, որ այս չար ոգւոց կերպարանք, արարչութեան գործը կ'աւերէր կ'ապականէր: Գ Սիւա հինգ գլուխ ունի, չորս ձեռք եւ երեք աչք իւր գլխաւոր ճակտին վրայ: Նանտի ցուլին կոնակին վրայ է: Կը նկարեն գնա սպառնալից եւ ահեղ, սուր եւ հատու ակռաներով լի են իւր լնդերք, իւր բաց շրթուներէն բոց կ'ելլէ, իւր բոցարձակ վարսից վրայ ապարօշ կը կազմեն մարդկային գանգեր, եւ մանեակն կախ կրծոց վրայ. օձեր կը վիտան իրանին եւ բազկաց չորս կողմն. ցուլին տեղն՝ վագրն է. վերջապէս իւր մարմինն ամբողջ մոխրագոյն ճերմակ գոյն մ'ունի, ահաւոր նշան հրաշէկութեան եւ անհաշտ ապականութեանց:

Ասոնք են Հնդկաց աստուածներն եւ դիցարանութեան գլխաւոր առասպելներն. եթէ մէկն ուզէ ստորակարգ աստուածները թուել, բոլոր անոնց արհամանքը պատմել եւ հակասական պատմութիւններն համաձայնեցնել, հատորներ ալ գրելով չի կրնար:

ԱՂԲԵՐԱԿՆ

Յորդ աղբերակն արծաթափայլ,
Հով զեփիւռին վայր ցանկացեալ,
Դու՛ որ քաղցրիկ գըղըման ձայն
Գողցես հառաչ խոր հեծութեան.
Ո՛հ իմ սըրտի բըլրակ հէյտին,
Ձոր գեղասահ ալիք քոյին
Բազմազըւարճ գեղազարդեն.
Քանի՛ զըւարթ քոյդ դարաստր են,
Ուր ես ճեմել գամ միայնիկ
Շընչել անդէն զով քաղցրասիւք:

Մինչ վարդագոյն այգ նորածին
Ձիս տեսանէ աստ զառաջին,
Կոխեալ առ ոտն ըզգեղ՝ դալար
Ի բուրազուարթն իմ՝ ճանապարհ,
Ամբոխ խորհուրդք իմոյս սըրտի,
Ընդ ծաղկաճեմ գաշտ դալարի,
Ըզհետ երթան ջուրց վըտակաց,
Եւ ըզմարդկան յուզեալ կենաց
Գահավիժեալ գնացիցն անդէն
Ձըստոյդ պատկեր ինձ գըծագրեն:

Թարգմ. ՄԻՀՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՃԵՐՈՅ

ՅՄԱՐՈՍԻՈՅ